

Սփիւռքի մեծ բացական՝ ղեկավարութիւն



ԳՈԿՏ. ՀՐԱԶ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ՝

Վերջին փորձերն են, սփիւռքի կառույցներու և ղեկավարութեան հարցը դարձած է ճող և մրահողիչ երեւոյթ մը: Ապագան մշտնջուր է, իսկ ներկայ վիճակը՝ յուսախաբեցնող: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի բնորոշումով՝ «Կը գտնուինք անդունդի եզրին: Համապատասխան դիրքորոշումներ պէտք է որդեգրենք» հեռու ամէն փեսակ անհրապէս մօտեցումէ ու մակերեսային դաբոնդութենէ»:⁽¹⁾

Ժամանակն է կարկինը աւելի լայն բանալու և արձարական հարցերու մասին խօսելու:

Բացառութիւնները յարգելով, այսօր սփիւռքի «դասական» կազմակերպութիւնները կը նմանին լքուած շէնքերու, ուր անցեալի փառքը փակաին յայտնապէս փրստանելի է, փերերը, դեռ փող մը գոյութիւն ունին, բայց շարքի բնակիչներ մնացած են: Ղեկավարները փող մը փակաին ներկայ են, բայց անդամները, յարկապէս երիտասարդները, կա՛մ բացակայ են, կա՛մ ալ ներգրատուած չեն: Ներկան ապրելու և ապագայ կերպերու ուժը զգալիօրէն թուցած է: Յեղասպանութենէն ետք, այս կազմակերպութիւնները կառուցուած էին ժամանակի պահանջներուն համապատասխան, երբ սփիւռքը նոր կը ձևաւորուէր, երբ գաղթական հայութիւնը կենսական անհրաժեշտութիւն ուներ համախմբուելու, կենսք վերակերպելու և ինքնութիւն պահպանելու, կազմակերպուելու: Սակայն ժամանակները փոխուած են, իսկ կառույցները՝ ոչ:

Երբեմնի աշխուժ ու կենսունակ այս կառույցները խորքային վերանորոգում և նոր շունչ կը պահանջեն, սակայն կը թուի, թէ անոնց ղեկավարները ո՛չ յարակ նպատակներ ունին, ո՛չ ալ բաւարար միջոցներ: Փոխաբերելով, գիտակցաբար կամ անգիտակցաբար, անոնք իրենց կազմակերպութիւնները վերածած են թանգարաններու, ուր իրենց ու անցորդներուն համար կը պահպանեն անցեալի վաստակի փայլքը՝ առանց ապագայի փնտրելու, յոյսի կամ լուրջ ծրագիրներու:

Ղեկավարութեան խնդիրը միայն փրկական հարց չէ: Վերջին փորձերուն, Սփիւռքի մէջ կարգաւորուած հարցախոյզերը ևս պարկերացուցած են այս հարցը: Սփիւռքահայ համայնքներու մէջ կա-

րարուած ուսումնասիրութիւնները զգալի մրահողութիւններ կը բացայայտեն ղեկավարութեան մասին: Տեսլական ունեցող և ուժեղ ղեկավարութեան պակասը կը նկատուի համայնքային կենսքի առաջնահերթ խնդիրներէն մէկը:⁽²⁾ Համայնքային ղեկավարներու և համայնքի անդամներու միջև կապը խզուած է, իսկ անդունդը՝ օրըսօրէ կը խորանայ:

Իրականութիւնը այն է, որ Սփիւռքը 21-րդ դարուն կտրուկ կերպարանափոխուած է, սակայն մեր կառույցները չեն յարմարած այս փոփոխութիւններուն: Այսօր սփիւռքը չունի իր պահանջներուն համաձայն ղեկավարներ, որոնք կրնան իսկապէս առաջնորդել և վերակազմակերպել զայն: Եթէ նման ղեկավարներ գոյութիւն ունենային, այսօր այս խնդիրներուն մասին անընդհապ պիտի չխօսէինք: Ղեկավարութիւնը պէտք չէ սահմանափակուի միայն գոյութիւն ունեցող իրավիճակը կառավարելով, այլ պէտք է զժէ ու կերպէ ապագան, ցանձ ու սերմանէ հունսերը և մշակել հիմքերը, այլապէս ան պարզապէս կը վերածուի վարչական պաշտօնի՝ առանց որեւէ խորքային ազդեցութեան:

Ղեկավարութեան ամէնէն էական պարտականութիւններէն մէկը կառույցին մշտական թարմացումն է կենսունակութեան ապահովումն է: Այս հարցերը ղեկավարները նախ իրենք իրենց պէտք է ուղղեն և անկեղծութեամբ հայելիին նային: Ո՞րն է իմ կառույցի կամ կազմակերպութեան առաքելութիւնը ԱՅՍՕՐ: Ի՞նչ նպատակներ պէտք է իրականացնեն, ի՞նչ ձեւերով, և ի՞նչ միջոցներով: Ի՞նչ դերակատարութիւն ունի երիտասարդութիւնը և ի՞նչ հնարաւորութիւններ կը տրուին անոր: Քանի՞ կին անդամներ ունին մեր որոշումներ կայացնող բարձրագոյն ղեկավար մարմինները: Քանի՞ 25-35 տարեկան երիտասարդ մաս կը կազմէ ղեկավարութեան:

Այս և այլ հիմնական հարցերը լոկ ձեւական ուսումնասիրութեան համար չեն, այլ գոյութեան խնդիրներ են, որոնք եթէ չգրանցեն իրենց լուծումը՝ կառույցները դաբապարտուած են ասփրճանական փլուզումի:

Առանց անկեղծ ներհայեցողութեան, ինքնասրբագրումի և ներքին «յեղափոխութեան» անհնար է «հեղեղութիւններու» կամ «շարքայիններու» ուղղութիւն և յոյս փայլ, ու աւելի էականը՝ նա-

խընդրելի ապագայի մը ճանապարհաբարեզը ուրուագծել:

Սփիւռքի միասնականութեան կոչքը կամ կենսացնը

Ամէնէն մրահողիչ երեւոյթներէն մէկն այն է, որ երբ խօսքը «համասփիւռքային», «միասնական» կամ «միացեալ» նախաձեռնութիւններու մասին է, անոնք յաճախ կը մնան անհասցէ և դաբարկ կարգախօսներ: Ո՞րոնք են այդ յայտարարութիւններուն հասցէաբերները.- ո՞ր կրօնական հասարակութիւնը, ո՞ր կուսակցութիւնը, ո՞ր կազմակերպութիւնը կամ կառույցը: Ծափ մը ղեկավարներ, որոնք նման կոչքը կ'ուղղեն, իրականութեան մէջ կը ձգտին համայնքային կազմակերպութիւնները համախմբելու իրենց ծրագիրներուն շուրջ՝ առանց իրական երկխօսութեան, փոխադարձ հասկացութեան կամ յարգանքի: Այսինքն, անոնք չեն ձգտիր հարցերուն շուրջ բաց քննարկումներու և համախոս լուծումներու, այլ պարզապէս կը փորձեն միասնորդելու իրենց կողմը՝ առանց երկուստեք գաղափարական կամ մարտավարական զիջումներու կամ յարմարեցումներու: Ծափ անգամ, նման յայտարարութիւններ փրկարութեան նշան են, այսինքն՝ ո՛չ մտածուած և մշակուած ծրագիր կայ ո՛չ ալ անհրաժեշտ միջոցները: Իսկ այն կազմակերպութիւնները, որոնք արդէն իրենց փնտրելու աշխարհները կապարած են և միջոցներ ձեռք բերած, աշխարհները կը փնտրեն առանց սպասելու այլ կառույցներու «միասնութեան» կամ «համագործակցութեան»:

Վերջերս, յորումծի մը մէջ⁽³⁾, սրբազան մրահող կուսակցական մը կը մարտնչէր իր կառույցին հիմնական հարցը՝

[Շարքայիններու] ըմբոստեցումը առիթ մը պէտք է հանդիսանար եւ հանդիսանայ... որ վերանային և քննարկեն կուսակցութեան ընդհանուր կառուցուածքը՝ սկիզբէն մինչև մեր օրերը: Այսօր կառուցուածքը ըսելով պէտք է հասկնալ անոր պարմութիւնը, կազմակերպական կառուցը, աշխարհընկալումը, քաղաքական դերակատարութիւնը, ծրագիրը, այլ խօսքով ամէն ինչ որ կ'առնուի կազմակերպութեան հետ, որպէս գաղափարներ և կազմակերպութիւն»:

Յօդուածագիրը ուրիշ կարեւոր կէտ մըն ալ կը մարտնչէ, թէ ինչպէս իր կուսակցութիւնը—և ևս պիտի աւելցնէ Սփիւռքեան «դասական» այլ կառույցները-

րը— իրենց պարմութիւնը և դերակատարութիւնը «առասպելականացուցած» են և իբրեւ այդպիսին «անքննելի» են: «Այս սրբացումը, որ շեշտուած է մասնաւորաբար Միջին Արեւելքի» կազմակերպութիւններու անդամներուն մէջ, «ժամանակի ընթացքին այլամերժութեան հոգեվիճակ ստեղծած է» կառույցներուն մէջ:

Այսօր մեր քննարկումին համար կարեւոր չէ ո՞ր կուսակցութեան մասին է խօսքը, ըստաճը բոլոր սփիւռքեան «դասական» կառույցներուն կը վերաբերի: Սփիւռքի ապագան պիտի որոշուի ոչ թէ լոկ անցեալի ձեռքբերումներով, այլ ապագայի համարձակ և խորափանջ փնտրութեամբ: Այժմ ժամանակն է ոչ թէ միայն խօսելու «համասփիւռքեան միասնականութեան» մասին, այլ իրական, գործնական քայլերու դիմելու՝ նոր փնտրութեամբ, նոր մեթոդներով և նոր առաջնորդներով:

Սփիւռքի կազմակերպութիւնները վերակենդանացնելու համար անհրաժեշտ է ինքնաքննադատութեան որդեգրումը, ինչպէս նաեւ աշխարհակերպի ու ոճի վերանայում: Սփիւռքեան կառույցները պէտք է յարակցեն իրենց առաքելութիւնն ու նպատակները՝ սրբաշնորհ բաց երկխօսութեան հարթակներ ղեկավարներու և անդամներու միջև: Երիտասարդներու ներգրատումը պէտք է դառնայ առաջնահերթութիւն՝ զիրենք ընդգրկելով որոշում կայացնող մարմիններուն մէջ և օգտագործելով թուային արհեստագիտութիւններ՝ զանոնք հասանելի դարձնելու նպատակով: Կանանց ներգրատումը և ղեկավարութեան մէջ անոնց ընդգրկումը, ցանցային և ճկուն կառավարման

մեթոդներու որդեգրումը, ինչպէս նաեւ՝ համայնքային կազմակերպութիւններու համար համագործակցային նոր ձեւաչափերու փորձարկումն ու գործադրութիւնը կրնան նպաստել աւելի ժամանակակից և կենսունակ կառույցներու ստեղծումին: Գաղափարախօսութիւնը գործնական ու կիրարկելի պէտք է ըլլայ և ոչ միայն «դասանք»:⁽⁴⁾ Անցեալի սխալներու դիտարկութիւնը և քննական մօտեցում որդեգրելը, դասեր քաղելը և նոր մօտեցումներ ներմուծելը կրնան հնարաւորութիւն փայլ կառույցներուն ձեռքբերելու անքննելի առասպելներէ և ականջալուր ըլլալու 21-րդ դարու պահանջներուն: Վերջապէս, նոր ղեկավարներու պարտաւորութիւնը, սփիւռքի այլ կառույցներու յաջողած օրինակներու որդեգրումն ու յարմարեցումը կրնան ապագայաւայտ, կենսունակ ու արդիւնաւէր ղեկավարութիւն ձեւաւորել:

* Դոկտ. Հրաչ Չիլիկիրեան (www.hratcch.info) ղեկերաբան, սփիւռքագէտ, հայկական հասարակութեան կուսակցութեան ծրագրային հեղինակ և գործադիր է:

⁽¹⁾ Երևանի մէջ ընթերցում Արամ Վեհափառի ուղերձը, «Երկիր» 26 Փետրուար 2025. <https://yerkir.am/hy/article/2025/02/26/287852>:

⁽²⁾ Հայկական Սփիւռքի Հարցախոյզ (2019, 2021, 2022), փետ՝ www.armeniandiasporasurvey.com

⁽³⁾ «Նոր Յառաջ», 6 Փետրուար 2025, էջ 6:

(Supրերակ21)

ԷՐՄԷՆԻ ՀԱՐՑԼԵՐԻՅԼԷ ԹԻՒՐՔՉԷ 1 ՀԱՊԷՐ

«Ափազըք Ռափիօ» 30 Եաշընփա

«Ափազըք Ռափիօ» 30-ունճու ելընըփա, 7-15 Մարտ թարիհների արաւընփա Պէյոյլու սինամարընփա «Ափազըք Ռափիօ իլէ Ռափիօ Փիլմ Հաֆթար» Տիւզնիլիոյր: Ռափիօ վէ սինամարը պիրարայա կեթիրեն ալթը ֆիլմըն օլուշաթ էթթիլիթ իւրեթիփ վէ ԻՊՊ Պէյոյլու սինամարընփա իլէնիլէվիլիթ:

7 Մարտ ճումա, 20.00-փա «Օն Թրանսլէյշըն Ազըք Ռափիօ-Միթլըր վէ Քիշիլըր» պելկեսէլիլէ պաշայան փրոկրամ 13 Մարտ Փերշնպէ 15.00-փէ, էն իլի ֆիլմ, էն իլի յետեթմեն, էն իլի էրէթ օյունճու վէ էն իլի սէնարյօ փալլարընփա Օսթար էօփիլէրիին քազանան «Տը Քիլկ Ափիճ», 14 Մարտ ճումա, 15.00-փէ «Թու Տը Ռայթ Թիլկ» վէ 15 Մարտ ճումարթեսի, 15.00-փէ «Տը Պոոք Տէր Ռաթթ» ֆիլմերի իլէ փեամ էփիլիոյր: